ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ք. Երևան «27» նոյեմբերի 2025թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Տիգրան Սիմոնյանի (այսուհետ՝ Ինստիտուտ), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Քոլոյանի, (այսուհետ՝ Ռադիո), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր).

Հաշվի առնելով, որ ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը «Լրագրություն» մասնագիտության շրջանակներում,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով «Լրագրություն» մասնագիտությամբ որակյալ մասնագետների պատրաստման արդյունավետության բարձրացումը,

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը՝ պրակտիկ համատեղ հետազոտությունների իրականացման, ուսանողների գործնական դասերի կազմակերպման, համատեղ գիտական միջոցառումների և սեմինարների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով Ռադիոն իր պատրաստակամությունն է հայտնում աջակցել Ինստիտուտում «Լրագրություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների գործնական պարապմունքները կազմակերպելու գործում:

2.2 Ինստիտուտը պատրաստակամ է պրակտիկ թեմաներ առաջարկել ուսանողներին՝ մասնագիտական հետազոտություններ իրականացնելու, իսկ Ռադիոն պատրաստակամ է գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել հետազոտություն իրականացնող ուսանողներին տրամադրելու՝ Ռադիոյին պատկանող ենթակառուցվածքներում (ստուդիաներում) անցնել վերապատրաստումներ և պրակտիկա, ինչպես նաև Ինստիտուտի ուսանողներին և դասախոսական անձնակազմին մասնակցել Ռադիոյի կողմից կազմակերպվող մասնագիտական քննարկումներին:

2.3 Համագործակցության շրջանակներում Ռադիոն Ինստիտուտին է ներկայացնում «Լրագրություն» մասնագիտության շարունակական զարգացման հետ կապված խնդիրները, իսկ Ինստիտուտն իր պատրաստակամությունն է հայտնում ընդունել այդ խնդիրները և կազմակերպել կրթական ծրագրերի և վերապատրաստումների իրականացման աշխատանքներ մասնագիտացված ամբիոնում:

2.4 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.4.1 Կողմերի ներկայացուցիչներից կազմված համատեղ խորհուրդների ձևավորման, թեզերի պաշտպանությունների կազմակերպման, հետազոտությունների իրականացման և Ինստիտուտի շրջանավարտների աշխատանքի անցնելուն աջակցման հարցերի շուրջ,

2.4.2 Ներդրումային, նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման գործում,

2.4.3 Գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման շուրջ,

2.4.4 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման ուղղությամբ,

2.4.5 Սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության՝ ենթակառուցվածքների, տարածքների և գույքի օգտագործման միջոցով,

2.4.6 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի և հետազոտությունների իրականացման աշխատանքներում,

2.4.7 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու ուղղությամբ,

2.4.8 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղությունների շուրջ:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության և համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.5 Հուշագիրի խզման դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտին հասցնելու համար:

4.6 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025 թ. 27-ին :

4.7 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտ»
հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան

ստորագրություն, Կ.Տ.

Ռադիո
«Հայաստանի Հանրային
ռադիոընկերություն» ՓԲԸ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
գործադիր տնօրեն՝ Արմեն Քոլոյան

ստորագրություն, Կ.Տ.